

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ուսանողական վարկ պետական ծրագրով («Բնակարան երիտասարդներին» ՈւՎԿ ՓԲԸ կողմից ֆոնդավորմամբ)

Հրապարակվել է՝ 14.12.2021թ.

1	Վարկի հիմնական չափանիշներ	
1.1	Վարկի նպատակային նշանակություն	Պետական ուսման հաստատությունների (ՈՒՀ) և ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր ունեցող ոչ պետական ՈՒՀ-ների բակալավրիատի (անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրի), մագիստրատուրայի և կլինիկական օրդինատուրայի ուսանողների ուսման վարձը վճարելու նպատակով վարկ (ՈւՀ-ի ցանկը ձևավորվում է ՀՀ Կրթության նախարարության տեղեկատվության հիման վրա, ներկայացված է Հավելված 1-ում, որը տեղադրված է Բանկի ինտերնետային կայքում https://www.vtb.am/img/content/credits/pdf/cucak-buheri-2017--nor.pdf հասցեով, և Հավելված 2-ում, որը տեղադրված է Բանկի ինտերնետային կայքում https://www.vtb.am/img/content/credits/pdf/cucak-buheri-2017--nor%20%20(1).pdf հասցեով)
1.2	Նպատակային խումբ	ՀՀ ռեզիդենտ և ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձինք
1.3	Վարկի ձևակերպման վայր	Բանկի ցանկացած մասնաճյուղ
1.4	Վարկի արժույթ	ՀՀ դրամ
1.5	Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք ¹	9% (որից 2%-ը սուբսիդավորվում է ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից, իսկ հաճախորդի գերազանց առաջադիմության դեպքում, որի փաստը նշված է ՈՒՀ տեղեկանքում, սուբսիդավորվում է 3%)
1.6	Տարեկան փաստացի տոկոսադրույք	6.17%-7.33%
1.7	LTV (Վարկ/Գրավ) առավելագույն հարաբերակցություն	-
1.8	Վարկի առավելագույն գումար	4,000,000 (ամբողջ ուսման ընթացքում)
1.9	Վարկի նվազագույն գումար	50,000 ՀՀ դրամ
1.10	Վարկի գումարի սահմանափակում	Առավելագույնը 5 մասնաբաժնով (յուրաքանչյուր ուս. տարվա համար մեկ մասնաբաժին), ընդ որում՝ յուրաքանչյուր մասնաբաժնի գումարը՝ չպետք է գերազանցի 800,000 ՀՀ դրամը կամ մեկ ուսումնական տարվա վարձի չափը: Ընդ որում՝ մասնաբաժնի գումարը կարող է վճարվել ինչպես կիսամյակի, այնպես էլ ուսումնական տարվա համար՝ պայմանով, որ մեկ ուսումնական տարվա համար գումարը չպետք է գերազանցի 800,000 ՀՀ դրամը: Մեկ մասնաբաժինը մեկ ուսման տարվա համար պայմանի խաղտման և Ուսանողական վարկի նույն ծրագրով կրկնակի վարկի ստացման դեպքում վարկը չի վերաֆինանսավորվելու ֆոնդավորման կապակցության կողմից:
1.11	Վարկի առավելագույն ժամկետ	Ուսման ժամկետ ² +6 տարի, բայց ոչ ավել, քան 10 տարի
1.12	Վարկի նվազագույն ժամկետ	3 ամիս
1.13	Վարկի մարման եղանակ	1. Անուիտետային մարումներ, ընդ որում ուսման ընթացքում (առավելագույնը 5 տարի) մարվում են միայն տոկոսները, իսկ ուսման ավարտից հետո հավասարաչափ մարվում են վարկի հիմնական գումարը և տոկոսները: 2. Անուիտետային մարումներ (ամսական հավասարաչափ մարվում են վարկի տոկոս + հիմնական պարտք)
1.14	Վարկի տրամադրման եղանակ	Վարկի գումարի անկանխիկ փոխանցում անմիջապես ՈՒՀ-ից ներկայացվող տեղեկանքում նշված ՈՒՀ-ի բանկային հաշվին:
1.16	Վարկի վաղաժամկետ մարման արգելք	Վաղաժամկետ մարման մասով սահմանափակումներ չկան: Վարկառու/ները իրավունք ունի/են՝ - առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծել վարկային պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ): Այդ դեպքում Վարկառու/ները պարտավոր է/են վարկի փաստացի օգտագործված օրերի համար վճարել վարկային պայմանագրով նշված փաստացի տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարները: - վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներից շուտ մարել վարկը: Տվյալ դեպքում Վարկառու/ների նկատմամբ տուժանք չի կիրառվում, ընդ որում՝ • ենթակա են նվազեցման վարկի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսների, միջնորդավճարների և սպասարկման վճարների ծախսը, • ենթակա չեն նվազեցման սույն պայմանագրի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված տուժանքները, վարկի մարման և/կամ տոկոսների վճարման նպատակով կատարված փոխանցումների համար, ինչպես նաև այդ նպատակով բացված հաշիվների սպասարկման համար վճարված գումարները, նոտարական վավերացման, պետական գրանցման (նշված ծառայությունների առկայության դեպքում) դիմաց կատարված վճարները, հավելյալ՝ սույն վարկի հետ կապ չունեցող, վարկառուի ցանկությամբ ընտրված ապահովագրական ծառայությունների դիմաց կատարված ապահովագրավճարները:

		Վարկի ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում ենթակա են վերադարձման նախապես վճարված, սակայն փաստացի չօգտագործված ամիսների/օրերի համար կատարված վճարները:
1.16	Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող տույժ	Վարկի պայմանագրով նախատեսված ժամկետներում վարկի մայր գումարը և/կամ տոկոսագումարները չվճարելու դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել Վարկի ժամկետանց մասի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը, և ժամկետանց Վարկի և/կամ ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ (մինչև դրանց փաստացի վճարումը) կիրառել տույժ՝ օրական 0.13% չափով, սակայն ոչ ավել, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված տուժանքի առավելագույն չափը, իսկ նշված առավելագույն չափին հասնելուց հետո Բանկն իրավունք ունի վերականգնել Վարկի մնացորդի (ներառյալ ժամկետանց մասի) նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը:
1.17	Պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր բացասական հետևանքներ	ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՅՈՒՄ ԳՐԱԿԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՎԱՐԱՐ ԶԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՅՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՄԱՐԿԵԼ ԶԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ: ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ԶԵՐ ԳՈՒՅՔԸ (ՏՈՒՆԸ, ՄԵՔԵՆԱՆ ԿԱՄ ԱՅԼ) ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՆԱԳԱՆՉՎԵԼ, ԵՅԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶԿԱՏԱՐԵՔ ԶԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ: ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ԶԵՐ ԿՈՂՄԻՅ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՅՈՒՄ ԲԱՆԿԸ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏԿՅԱԼՆԵՐԸ ՈՐԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ԶԵՎԱՎՈՐԿՈՒՄ Է ԶԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՅ ՏԱՐԵԿԱՆ ՄԵՎ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ԶԵՈՔ ԲԵՐԵԼ ԶԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:
1.18	Վարկի որոշման կայացման և հաճախորդին տեղեկացման առավելագույն ժամկետ	2 (երկու) աշխատանքային օր
1.19	Վարկի տրամադրման և ՈՒՀ-ի բանկային հաշվին փոխանցման ժամկետ	Վարկային պայմանագիրը կնքելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում
1.20	Ապահովություն	Ուսանողի ծնողներից կամ խնամակալներից մեկի կամ այլ անձի երաշխավորություն
2	Բանկի միջնորդավճարներ	
2.1	Հայտի դիտարկման միանվագ միջնորդավճար	Նախատեսված չէ
2.2	Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար	Նախատեսված չէ
2.3	Վարկային հաշվի սպասարկման ամսական միջնորդավճար (պարտադիր)	Նախատեսված չէ
3	Վարկառուին/Համավարկառուին ներկայացվող պահանջներ	
3.1	Կարգավիճակ	1. Վարկառուն պետք է լինի ՀՀ ռեզիդենտ և ՀՀ քաղաքացի 2. Համավարկառուն (տոկայության դեպքում) պետք է լինի ՀՀ ռեզիդենտ կամ ԼՂՀ-ում հաշվառված, սակայն ՀՀ-ում եկամուտ ստացող քաղաքացի 3. Երաշխավորը պետք է լինի ՀՀ ռեզիդենտ միայն այն դեպքում, երբ վարկային հայտի շրջանակներում վերլուծվում են նրա եկամուտները (վճարումնակությունը)
3.2	Համավարկառու	1. Այն դեպքում, եթե վարկային հայտի շրջանակներում հաշվի են առնվում Վարկառուի կամ Երաշխավորի առաջնային կամ երկրորդային եկամուտները, որպես Համավարկառու կարող է հանդես գալ՝ Վարկառուի կամ Երաշխավորի հետ ազգակցական կապի մեջ գտնվող ֆիզիկական անձինք (եթե Երաշխավոր է հանդիսանում այլ անձը, ազգակցական կապ պետք է լինի Վարկառուի հետ) (ամուսին, կին, մայր, հայր, չափահաս երեխաներ, եղբայր, քույր, քույրերի/եղբայրների ամուսին/կին, ամուսնու/կնոջ ծնողներ, հորաքույրներ/մորաքույրներ, հորեղբայրներ/մորեղբայրներ, տատիկներ, պապիկներ): 2. Այն դեպքում, եթե և Վարկառուն, և Երաշխավորը չունեն առաջնային կամ երկրորդային եկամուտներ, և վարկային հայտի շրջանակներում հաշվի են առնվում միայն Համավարկառուի առաջնային կամ երկրորդային եկամուտները, որպես Համավարկառու կարող է հանդես գալ՝ Վարկառուի/Երաշխավորի հետ ազգակցական կապի մեջ գտնվող ֆիզիկական անձը (եթե Երաշխավոր է հանդիսանում այլ անձը, ազգակցական կապ պետք է լինի Վարկառուի հետ) (ամուսին, կին, մայր, հայր, չափահաս երեխաներ, եղբայր, քույր, ամուսնու/կնոջ ծնողներ):
3.3	Երաշխավոր	Ուսանողի ծնողներից կամ խնամակալներից մեկը կամ այլ անձ
3.4	Վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	Բանկի ներքին իրավական փաստաթղթերի համաձայն
3.5	Ընդհանուր աշխատանքային փորձ	Վերջին աշխատանքային վայրում ոչ պակաս, քան 4 ամիս անընդհատ աշխատանքային փորձ
3.6	Վարկառուի տարիք	16 տարեկանից (Երաշխավորի/համավարկառուի համար՝ 21 տարեկան), և վարկի մարման պահին չպետք է գերազանցի թոշակի անցնելու տարիքը
4	Լրացուցիչ պայմաններ	
4.1	Վարկային ծառայությունից օգտվելու համար հաճախորդը Բանկում պետք է ունենա բանկային հաշիվ:	
4.2	Ընթացիկ հաշիվների բացում/վարում/կանխիկացում	Համաձայն Բանկի սակագների, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/accounts-and-payments հասցեով:

4.3	Վարկային հաշվի գծով քաղվածքի/տեղեկանքի տրամադրում	"ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ գործող "Բանկային հաշիվների բացման և սպասարկման պայմանների և սակագների" համաձայն, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում https://www.vtb.am/am/secondary/vypiski հասցեով:
4.4	¹ - Եթե ուսանողական վարկի հաստատվելուց/տրամադրվելուց հետո վերջինս չի վերաֆինասավորվում "Բնակարան երիտասարդներին" ՈւՎԿ ՓԲԸ կողմից կամ - եթե վարկի գործողության ընթացքում ուսման ընդհատման/դադարեցման կամ այլ պատճառների դեպքում վարկը համարվում է ոչ որակավորված և հետագայում չի վերաֆինանսավորվում ֆոնդավորման կազմակերպության կողմից (ինչպես նաև դադարում է սուբսիդավորումը), ապա վարկը վերաձևակերպվում է Բանկի ռեսուրսներով Ուսանողական վարկի գործող պայմաններով, իսկ նմանների բացակայության դեպքում վարկի դրույքը սահմանվում է տարեկան 24%: Ուսման մեջ ընդհատում չեն համարվում պարտադիր պին. ծառայության կորակոչով ՀՀ պին. ուժերում ծառայության տարիները:	
4.5	² Ուսման ժամկետ է համարվում ուսման մնացած ժամկետը (ֆոնդավորումով վարկի դեպքում, բակալավրիատի/մագիստրատուրայի/կլինիկական օրդինատուրայի ուսանողի ուսման մնացած տարիները)	
Բանկի ռեսուրսով ուսանողական վարկի տրամադրման համար Վարկառուից/Համավարկառուից պահանջվող փաստաթղթերի ցանկ		
1	Պատշաճ կերպով լրացրած Դիմում-հայտ	
2	Անձը հաստատող փաստաթուղթ - ՀՀ քաղաքացիների դեպքում՝ անձնագիր կամ նույնականացման քարտ, ոչ ՀՀ քաղաքացիների դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ: ՀՀ քաղաքացու դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական քարտ) կամ նույնականացման քարտ*, բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք Եթե Վարկառու/Համավարկառու ամուսնացած է, ապա նաև կնոջ/ամուսնու փաստաթղթեր: * Նույնականացման քարտի ներկայացման դեպքում պարտադիր է հանրային ծառայությունների համարանիշի առկայությունը նույնականացման քարտի վրա:	
3	Ուսումնական հաստատությունից տեղեկանք	
4	Հաճախորդի ծնողների/խնամակալների անձը հաստատող փաստաթուղթերի պատճեն	
5	Եկամուտների մասին տեղեկանք պահանջվում է Վարկառուից և/կամ Երաշխավորից և/կամ Համավարկառուից միայն այն դեպքում, եթե վարկային հայտի շրջանակներում վերլուծվում են Վարկառուի և/կամ Համավարկառուի եկամուտները (վճարունակությունը) (բացառությամբ այն դեպքերի, երբ եկամուտը ստացվում է "ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ-ի հաշիվներով):	
6	Եթե Երաշխավոր է հանդիսանում Վարկառուի խնամակալը – հոգեբարձության և խնամակալության փաստը հավաստող փաստաթուղթ (դատարանի կամ հոգեբարձության և խնամակալության պետական մարմնի որոշում): Այն դեպքում, եթե ուսանողը երկկողմանի ծնողապուրկ է և չունի խնամակալ՝ հոգեբարձության և խնամակալության պետական մարմնի կողմից տրված տվյալ փաստը հավաստող փաստաթուղթ:	
7	Անհրաժեշտության դեպքում Բանկի կողմից կարող են պահանջվել այլ փաստաթղթեր:	

Ուշադրություն՝

Հաճախորդի վարկային հայտը մերժվում է, եթե՝

- **Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր,**
- **Հաճախորդը չի բավարարում Բանկի նվազագույն պայմաններին,**
- **«ԱՔՌԱ» վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը (առկայության դեպքում նաև Համավարկառուները/Երաշխավորները) ունի բացասական վարկային պատմություն,**
- **Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը վարկունակ չէ,**
- **Վարկավորման գործընթացի արդյունքում հաճախորդի վերաբերյալ հայտնի է դարձել այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից ներկայացված տեղեկության հավաստիությունը:**

Ուշադրություն՝

Ֆինանսական կազմակերպության կողմից սպառողին վարկ տրամադրելու դրական որոշման բոլոր գործոնները և վարկի մերժման բոլոր գործոնները, որոնք սահմանված են ֆինանսական կազմակերպության կողմից ընդունված ներքին իրավական ակտերով, տեղեկատվություն վարկ տրամադրելու որոշումների կայացման համար կիրառվող վարկարժանության գնահատման եղանակների վերաբերյալ (վարկային պատմություն, վարկային սքոր), այդ թվում՝

ա. Վարկային պատմության էությունը, կարևորությունը, ինչպես է այն ձևավորվում, ինչ տեսակի և ինչ վաղեմության տեղեկատվություն է պարունակում, ինչ պետք է անեն սպառողները սխալ կամ թերի վարկային պատմությունը փոփոխելու համար և այլն, ինչպես նաև հղում www.abcfinance.am և www.acra.am կայքերի համապատասխան էջերին:

բ. Վարկային սքորի (կիրառելու դեպքում) էությունը, կարևորությունը, ինչ տեսակի վարկային սքոր է կիրառվում ֆինանսական կազմակերպության կողմից (Ֆայկո, ԱՔՌԱ, սեփական սքոր գնահատական, թե այլ): Սեփական վարկային սքոր կիրառելու դեպքում տեղեկատվություն սքորի հաշվարկի վրա ազդեցություն ունեցող հիմնական գործոնների (օրինակ՝ գործող վարկերի գումար և քանակ, վարկային պատմության երկարություն, վարկային հարցումներ, ժամկետանց վարկեր և այլն) և դրանց ազդեցության ուղղության (բարձրացնում է, թե իջեցնում է սքորը) վերաբերյալ: ԱՔՌԱ կամ Ֆայկո սքոր կիրառելու դեպքում տեղադրվում են հղումներ www.abcfinance.am և www.acra.am կայքերի համապատասխան էջերին:

գ. Ինչ քայլեր կարող են ձեռնարկել սպառողները իրենց վարկային պատմությունը և սքորը բարելավելու համար (օրինակ՝ մարել գործող վարկերի մի մասը, բացառել գործող վարկերի գծով ժամկետանց պարտավորությունների առկայությունը), ինչպես նաև ինչ գործողություններ չպետք է անեն վարկային պատմության և սքորի վատթարացումից խուսափելու համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅԹԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵՋ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍ ԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՁՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅԹԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՏՆԵԼ ԲԱՆԿԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅԹՈՒՄ՝ <https://www.vtb.am/am/information/raschet-fakticheskoy-stavki> ՀԱՍՑԵՈՎ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՍ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՎԱՐԱԿՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՋ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԲԱՆԿԸ ՁԵՋ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՋ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ “ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ” ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է՝ <https://www.fininfo.am/compare-student-loan>

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Բանկը՝ “Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին” ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով, կարող է Հաճախորդից “ճանաչիր քո հաճախորդին” (“Know your customer”) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում: